

## **ԽՈՐՀՄԱՆՇԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

### **Ստեփանյան Վահագն**

*Քաղաքական զիտությունների թեկնածու,  
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
իրավունքի ինստիտուտի ավագ զիտաշխատող*

Հայաստանը ներկայումս թևակոխել է տեղեկատվական դարաշրջան, և ուզենք, թե չուզենք, Հայաստանի հասարակությունը վերածվել է տեղեկատվական հասարակության: Համապատասխանաբար, տեղեկատվական տեխնոլոգիաները ներթափանցել են Հայաստանի հասարակական - քաղաքական կյանքի բոլոր ոլորտներն ու առաջացրել եական փոփոխություններ: Հատկանշական է, որ այդ փոփոխություններն ունեն ընդգծված հետարդիական (պոստմոդեռնիստական) բնույթ:

Ներկայումս Հայաստանի թվային - տեղեկատվական տարածքում սկսվել է քաղաքական խորհրդանիշների և նշանակությունների հուժկու շարժում, ինչն աննախադեպ բարձրացրել է խորհրդանշական քաղաքականության դերն ու նշանակությունը քաղաքական կյանքում: Տարկ է նշել, որ հենց խորհրդանշական քաղաքականության միջոցով են ձևավորվում սոցիալական իրավանության վերաբերյալ հասարակական պատկերացումները: Տեղեկատվական - հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով իշխանությունների կողմից հասարակությանն են հաղորդվում քաղաքական վերնախավի համար ձեռնորու խորհրդանիշներ, և քաղաքականությունը վերածվում է խորհրդանշական բնույթ ունեցող արարողության կամ հանդիսության:

Տեղեկատվական դարաշրջանում Հայաստանում իրականացվող խորհրդանշական քաղաքականության դերի ու նշանակության մեծացումը նոր խնդիրներ են առաջադրում քաղաքագետների համար: Եթե դասական քաղաքագիտությունը հիմնականում ուսումնասիրում է քաղաքական գործընթացները և քաղաքական ինստիտուտները, ապա ներկայումս անհրաժեշտ է ուսումնասիրել նաև խորհրդանշական քաղաքականությունը կամ քաղաքականության խորհրդանշական կողմը: Այստեղից ել Հայաստանում խորհրդանշական քաղաքականության ա-

ռանձնահատկությունների լայնածավալ ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Խորհրդանշական քաղաքականությունը նույնքան հին է, որքան ինքը՝ քաղաքականությունը, սակայն գիտական հետազոտության առարկա է դարձել ոչ վաղ անցյալում՝ նախորդ դարի երկրորդ կեսին:

Քաղաքական խորհրդանշական միջավայրն անցյալ դարի երկրորդ կեսին իր ուսումնասիրության առանձին առարկա է դարձել ամերիկացի նշանավոր քաղաքագետ Մյուրեյ Էդելմանը (1929-2001): Նա ել մշակել է խորհրդանշական քաղաքականության տեսական հիմունքները: Խորհրդանշական միջավայրի ուսումնասիրության ընթացքում նա փորձել է բացատրել քաղաքական կյանքի մի շարք հանելուկային երևույթներ, որոնք անհասկանալի են ռացիոնալ ընտրության տեսության շրջանակներում: Այսպես, ինչո՞ւ են որոշակի քաղաքական գաղափարներ ավելի հանրաճանաչ, ինչո՞ւ են նրանք ավելի մեծ ժողովրդականություն վայելում, քան մյուսները, ինչո՞ւ քաղաքական գործիչները մեծ ջանքեր են գործադրում այնպիսի դատարկ հայտարարություններ ձևակերպելու և տարածելու համար, որոնք, ըստ Էության, ոչինչ չեն նշանակում: Կամ, ասենք, վիճաբանող կողմերի դիրքորոշումներն ինչո՞ւ են հենց այդ կերպ որոշվում և ոչ այլ կերպ:

Մյուրեյ Էդելմանը քաղաքականությունը համարում է խորհրդանշական ձև և ուսումնասիրում նրա խորհրդանշական ազդեցությունը քաղաքական վերնախավի և զանգվածների վրա<sup>1</sup>: Նա առանձնացնում է քաղաքականության դրսնորման երկու ձև՝ քաղաքականությունն իրեն հանդիսախաղ և քաղաքականությունն իրեն քաղաքական գործունեություն, որն իրականացվում է կազմակերպված խմբերի կողմից՝ իրենց համար լիովին կոնկրետ, զգալի օգուտներ ստանալու համար: Քաղաքականությունը մի կողմից հանդիսախաղ է, «վերացական խորհրդանշների շրեթք», մյուս կողմից՝ յուրահասող շահեր հետապնդող, կազմակերպված քաղաքական գործունեություն<sup>2</sup>: Համապատասխանաբար, քաղաքականությունը կարող է ունենալ երկու տարրեր նշանակություններ: Քաղաքականության ակտիվ մասնակիցների համար, որոնք փոքրամասնություն են կազմում, այն ցանկալի արդյունքի հասնելու միջոց է, զանգվածների համար՝ հանդիսություն կամ հանդիսախաղ: Փաստորեն, Մյուրեյ Էդելմանը ելնում է քաղաքականության

<sup>1</sup> Edelman M., *The Symbolic Uses of Politics*. – Urbana: Univ. University of Illinois Press, 1964. p. 201.

<sup>2</sup> Նոյն տեղում, թ. 5.

երկճուղ (դիխոտոմիկ) կառուցվածքից: Այդ կառուցվածքը բխում է զանգվածային մտածողության արմատական երկճուղությունից: Քաղաքական «դրամայի» հանդիսատեսների համար ամեն մի քաղաքական իրադարձություն կամ մարդկանց սարսափեցնող սպառնալիք է, կամ նրանց հույս ներշնչող հանդարտություն: Այստեղից հետևում է, որ մարդկանց կարելի է հունից հանել կամ հանգստացնել խորհրդանշական քաղաքականության միջոցով, այսինքն՝ ոչ թե մարդկանց պահանջները բավարարելով կամ անտեսելով, այլ այդ նույն պահանջներն ու սպասելիքները փոփոխելով:

Մյուրել ենելմանը քաղաքականության մեջ կիրառվող խորհրդանշները համարում է ոչ միայն օբյեկտիվ իրականությունը միջնորդավորող ձև, այլև քաղաքական իրականությունը ձևավորող բաղադրիչ: Հենվելով խորհրդանշական ինտերակցիոնիզմի դրույթների վրա, նա գտնում է, որ մարդը կենդանի էակներից միակն է, ով խորհրդանշների միջոցով վերականգնում է անցյալը, ընկալում ներկան և կանխատեսում ապագան:

Մարդն ունի իր զգայական տվյալները խորհրդանշական ձևով օգտագործելով ընդունակություն: Խորհրդանշները մարդուն օգնում են վերացարկվել իրականությունից, բարդ դատողություններ կատարել, պլանավորել գործողությունները: Խորհրդանշները արտացոլում կամ ի մի են բերում, աղավաղում և խախտում սոցիալական կապերը, կառուցադրում այն, ինչը նրա ուշադրությանն են ներկայացնում զգայական տվյալները: Միևնույն ժամանակ, այդ ընդունակությունը պայմանավորում է մարդկային պատրանքները, ըմբռնման սխալները, երեխովյաների առասպեկտականացումը, սխալ գործողությունները: Այստեղից հետևում է, որ քաղաքական վարքագծի նույնական բացատրության համար անհրաժեշտ է հաշվի առնել մարդկանց կողմից տարբեր շահերի, հանգամանքների, սպառնալիքների և հնարավորությունների խորհրդանշական ըմբռնման ընթացքում ընդհանուր իմաստների ձևավորման և դրանք փոփոխելու առանձնահատկությունները<sup>3</sup>: Խորհրդանշները կրում են հուզական հակադիր լիցքեր: Նրանք կարող են խթանել, աշակցել մարդուն և զայթակել ու մոլորության մեջ զցել: Խոսքը ոչ այնքան առանձին խորհրդանշների մասին է, ինչպիսիք են օրիներգերը, զինանշանները, դրոշները և այլն, որքան՝ խորհրդանշի հանդիսացող գործողությունների: Քաղաքական խորհրդանշների ազդեցությու-

<sup>3</sup> Edelman M. *Politics as Symbolic Action. Mass Arousal and Quiescence.* – Chicago: Markham Publishing Company, 1971. p. 217.

նը պետք է բացատրել ոչ այնքան նրանով, թե որքանով են նրանք քաղաքական վերնախավին օգնում ձեռնածություններ անել հասարակական գիտակցության հետ, որքան նրանով, թե այդ խորհրդանիշներն ինչ չափով են նպաստում զանգվածների կողմից քաղաքական կարգն ընդունելուն:

Մյուրեյ Էդելմանը խորհրդանիշները մեկնաբանում է նաև իբրև «իմաստները ճանաչողի խաղացանկի կազմակերպման» եղանակներ: Քաղաքական խորհրդանիշները սուկ ապրիորի իմաստային կառուցվածքներ են, որոնք մարդկանց օգնում են տեղեկատվությունը յուրացնելու՝ նախապես հայտնիի մակարդակին իջեցնելու միջոցով: Քաղաքական խորհրդանիշներն այն կառուցակարգի հիմքն են, որը պայմանավորում է սոցիալական իրականության ընկալումը, հետևաբար, նաև մարդկանց քաղաքական վարքագիծը<sup>4</sup>: Հստ Մյուրեյ Էդելմանի, սոցիալականորեն կերտվող իմաստների խորհրդանշական գործառույթները կարելի են նկարագրել այնպիսի հասկացությունների միջոցով, ինչպիսիք են դիսկուրսը, իդեան, պատկերը, պատկերացումը, առասպելը, խորհրդանիշը (այն նշանների կամ պատկերների առավել նեղ իմաստով, որոնք պայմանականորեն մարմնավորում են ինչ-որ երևոյթներ, իդեաներ): Այս բոլոր հասկացությունները խորհրդանշական քաղաքականության խնդրակարգը նկարագրելու և վերլուծելու գործիքներ են: Այդ տեսակետից իր խորհրդանշական քաղաքականության հղացքը (կոնցեպտը), ինչպես Symbolic Politics, այնպես է Symbolic Policy նշանակությամբ, կարող է համարվել քաղաքական իրականության էմպիրիկ նկարագրության և վերլուծության գործիք:

Մյուրեյ Էդելմանի խորհրդանշական քաղաքականության տեսության մեջ գլխավոր հասկացությունը «խորհրդանշական ակտն» է: Խորհրդանշական ակտը գործողություն է, որի բացարիկ օբյեկտներն են խորհրդանիշները և նրանց հետ կապված մտքի այնպիսի առարկաները, որոնք անտեսում են այդ նույն խորհրդանիշներին առնչվող հղացքային (կոնցեպտուալ) մտքի առարկաները: Խորհրդանիշներով ծանրաբեռնված քաղաքական ակտերը նպաստում են իշխանությունների նկատմամբ վստահության ամրապնդմանը, առկա սոցիալական պայմաններին համակերպվելուն: Այդ քաղաքական ակտերի միջոցով վերնախավը կարողանում է ապահովել իր նյութական շահերը և ազդել նյութական բարիքների բաշխման վրա տվյալ քաղաքական համակար-

<sup>4</sup> Նույն տեղում, pp. 33-35.

զի ընձեռած հնարավորությունների շրջանակներում: Պետք է նկատի ունենալ, որ Մյուրել Էդելմանը «խորհրդանշական ակտ» հասկացությունը կապում է լեզվի պրազմատիկ մեկնաբանության հետ: Այդ առումով, խորհրդանշական ակտը, իբրև լեզվական ակտ, ավելի շուտ քաղաքական գործողություն է, քան՝ քաղաքականության նկարագրության միջոց: Լեզուն, քաղաքական իրադարձությունները, ինքնազնահատականները և այլն միևնույն գործողության մասերն են, որոնք փոխադարձաբար պայմանավորում են միմյանց նշանակությունները<sup>5</sup>: Այն, ինչ մենք ընկալում ենք իբրև քաղաքական իրադարձություն, օրինակ՝ ընտրությունները, հաճախ խորհրդանշական կերտվածքներ կամ բեմականացումներ են, որովհետև իրական քաղաքական գործընթացների ուղղակի դիտարկումը, առավել ևս անմիջական վերահսկողությունը, անհասանելի է զանգվածներին:

Խորհրդանշական ակտերի քաղաքական արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մարդիկ մեծամասամբ մտածում են ստերեոտիպերով՝ անձնավորելով և խորհրդանշանակորեն պարզեցնելով քաղաքական իրականությունը: Հենց դա է մարդկանց օգնում կողմնորոշվելու քաղաքական բարդ իրադրություններում: Քաղաքական ազդանշանների անորոշությունը ստեղծում է էկզիստենցիալ սպառնալիք և սարսափ առաջացնում, և միայն այդ դեպքում քաղաքական նշանակալից խորհրդանշիների փոխադարձ համաձայնեցվածությունը կարող է ստեղծել քաղաքական իրականությունը կարգի բերող մեկնաբանություններ: Եթե խորհրդանշական ակտերը վերածվում են խորհրդանշական պրակտիկաների, տեղի է ունենում խորհրդանշական ակտերի ինստիտուցիոնալիզացումը:

Մյուրել Էդելմանն առանձնացնում է երկու խորհրդանշական ձեւեր, որոնցով ներծծված են քաղաքական ինստիտուտները: Այդ խորհրդանշական ձեւերն են առասպելը և արարողությունը<sup>6</sup>: Առասպելը քացատրում է ստեղծված քաղաքական արարողությունը ապահովում քաղաքականության դիտարժան կողմը և ստեղծում զանգվածների կողմից քաղաքականությանը մասնակից լինելու տպավորություն: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ առասպելը և արարողության կամայական գործածությունը կարող է ձախողվել, քանի որ համապատասխան ներուժ ունեցող «կուտակիչ խորհրդանշիները» ստեղծվում են ոչ

<sup>5</sup> Edelman M. *Political Language: Words That Succeed and Policies That Fail*. N.Y. e. a. Academic Press. 1977. p. 166.

<sup>6</sup> Edelman M. *The Symbolic Uses of Politics*. p. 16.

թե կամայականորեն, այլ աստիճանաբար, սոցիալական կյանքի զարգացմանը զուգընթաց<sup>7</sup>:

Խորհրդանշական քաղաքականության ընդհանուր բնույթագիրը, մասնավորապես խորհրդանշական քաղաքականության տարբեր բընորոշումները մեզ թույլ են տալիս ձևակերպելու հետևյալ տեսական դրույթները, որոնք պետք է ընկած լինեն Հայաստանում խորհրդանշական քաղաքականության ուսումնափրության հիմքում: Խորհրդանշական քաղաքականությանը իրական քաղաքականության անխուսափելի ուղեկիցն է, նրա պարտադիր բաղադրիչը: Գրեթե բոլոր իրական քաղաքական գործողություններն ունեն նաև խորհրդանշական քաղադրիչ, որն ուղղակի կամ քողարկված ազդեցություն է գործում զանգվածների գիտակցության և վարքագծի տարբերակների ընտրության վրա: Դրա հետ մեկտեղ, իշխանությունները, ընդդիմությունը, քաղաքական գործիչները և առանձին անհատներ գիտակցաբար ձեռնարկում են այնպիսի գործողություններ, որոնց նպատակը որոշակի իմաստներ ներշնչելն ու քաղաքական իրադրությունը կառուցադրելն է: Այդ գործողություններն ունեն ընդգծված քաղաքական և խորհրդանշական բնույթ: Խորհրդանշական քաղաքականությունը, լինի այն իրական քաղաքականության բաղադրիչ, թե զուտ խորհրդանշական գործողություն, մեկնաբանում, դրանով իսկ կառուցադրում է սոցիալ-քաղաքական իրադրությունը:

Խորհրդանշական քաղաքականությունն ունի իր մշակութային-քաղաքական հիմքերը: Այդ հիմքերն են քաղաքական առասպելները, արարողությունները, տոնակատարությունները և հիշատակի օրերը: Քաղաքական առասպելը բնորոշվում է իրու այնպիսի առասպել, որն օգտագործվում է քաղաքական նպատակների՝ իշխանության պայքարի, իշխանության լեզիտիմացման, քաղաքական տիրապետության հաստատման համար<sup>8</sup>: Ենթադրվում է, որ ցանկացած քաղաքական առասպել քողարկում է որոշակի անձանց և սոցիալական խմբերի շահեր: Ակնհայտ է, որ այս բնորոշման մեջ շեշտվում է քաղաքական առասպելի արհեստական, գործնական, կիրառական կողմերը: Մեկ այլ բնորոշման համաձայն, քաղաքական առասպելն այնպիսի կանխադրույթների և իռացիոնալ գաղափարների արժեքանական համալիր է, որը ձևավորում է անհատի աշխարհայացքային դիրքորոշումների ողջ տարրապատկերը գաղափարախոսությունների միջնորդությամբ, ո-

<sup>7</sup> Edelman M. *The Symbolic Uses of Politics*. p. 201.

<sup>8</sup> Պոլաძე А. Политическая мифология. – М., ЭСКМО. 2003. с. 383.

րոնք ելակետային առասպելի, որպես՝ հավատի ակտի, քարոզական և կեղծ - բանական վարկածներն են<sup>9</sup>: Այս բնորոշումն առավել լայն է, նըրանում շեշտվում են քաղաքական առասպելի ինչպես օբյեկտիվ՝ մըշակութային, այնպես էլ սուբյեկտիվ՝ տեխնոլոգիական-գաղափարախոսական կողմերը:

Խորհրդանշական քաղաքականության մշակութային - քաղաքական կարևոր իմմերից են նաև քաղաքական արարողությունները, որոնք մեծ դեր են խաղում քաղաքական կյանքում: Այդ արարողություններն, ըստ Էության, խորհրդանշական քաղաքականության տարածքում իրականացվող հաղորդակցական գործողության խորհրդանշական ձևեր են: Քաղաքական արարողություններ կարելի է համարել հանրապետության նախագահների և պաղամենտների պատգամավորների երդմանակալության արարողությունները, շքահանդեսներն ու զորահանդեսները, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչների ընդունելության արարողությունները և այլն: Քաղաքական արարողությունները սերտորեն կապված են քաղաքական առասպելների հետ և, հաճախ, հանդես են զայխ իբրև հասարակական գիտակցության մեջ քաղաքական առասպելների ամրակայման և փոխանցման միջոց: Քաղաքական արարողության հիմնական գործառույթը զանգվածներին իշխանությանը և նրա արժեքներին հաղորդակցի դարձնելն է:

Հարկ է նշել, որ արարողությունները, իբրև այդպիսին, ընդհանուր մշակութային պրակտիկաներ են: Արարողության տարածված բնորոշումներից մեկի համաձայն, այն գործողությունների ստերեոտիպային հաջորդականություն է, որն ընդգրկում է իմաստավոր շարժումներ, բառեր և օբյեկտներ, կատարվում է հասուր նախատեսված վայրերում, կատարողների շահերից ելնելով, գերբնական ուժերի կամ էակների վրա ազդելու նպատակով<sup>10</sup>: Այս բնորոշման մեջ ընդգծվում է որոշակի երևույթների նկատմամբ արարողություն կատարողների վերաբերմունքի սրբազն բնույթը: Հանրաճանաչ արարողություններից կարելի է նշել լոռության րոպեի կամ ազգային Օրիներգի կատարման ընթացքում ոտքի կանգնելը: Բազմաթիվ արարողություններ կան մարդկանց մահվան, թաղման և հիշատակի հետ կապված: Արարողությունները, այդ թվում՝ քաղաքական արարողությունները, վերջին հաշվով, խմբային վարքագծի խորհրդանշական ձևեր են, վերարտադրում են խորհր-

<sup>9</sup> Михайлов Д. Политическая мифология: проблемы определения, структура и функции // Вестник. Воронеж. гос. ун-та. Серия: Философия. 2010. №2. с. 118-127.

<sup>10</sup> Тернер В. Символ и ритуал. – М., Наука. 1983. с. 277.

դանշական արժեքներ և վերահսկում ու պահպանում են խմբային հիշողությունը:

Խորհրդանշական քաղաքականության մշակութային - քաղաքական հիմքերից մեկն էլ տոնները, տոնակատարությունները և հիշատակի օրերն են: Այդ տոնները, տոնակատարությունները և հիշատակի օրերը, այսպէս կոչված, հիշողության քաղաքականության կարևոր գործիքներից են: Հիշողության քաղաքականությունը խորհրդանշական քաղաքականության քաղկացուցիչ մասն է, որի միջոցով մեկնարան-փում է անցյալը: Այդ մեկնարանությունը ներառում է խորհրդանշական և մշակութային մի շարք պրակտիկաներ, որոնց միջոցով հիշվում կամ մոռացության են մատնվում տվյալ հասարակության պատմական անցյալի իրադարձությունները: Հարկ է նշել, որ պատմական անցյալը իշխանության լեզվիմացիայի կարևոր ռեսուրսներից մեկն է: Իշխանությունները հաճախ վկայակոչում են անցյալը, հիմնականում հղում անելով պատմական առասպեկտներին, իրենց գործողությունները, որոշումները, ինչպես նաև իրենց հայացքներն արդարացնելու համար, դրանով իսկ նրանք կերտում են անցյալի մասին իրենց անհրաժեշտ պատկերացումները:

Ներկայում Հայաստանի քաղաքական խորհրդանշական տարածքը խիստ խայտաբղետ է: Այստեղ շրջանառվում են բազմապիսի խորհրդանիշներ, զաղափարներ և պատկերացումներ, առկա են բազմաթիվ հակասություններ, ինչպես նաև արդիական քաղաքական իրողություններին չհամապատասխանող դրվագներ մեկնարանություններ: Հայաստանում իրականացվող խորհրդանշական քաղաքականությունը, հիմնականում, ստեղծված քաղաքական իրականության արձագանքն է: Այն միտված է ոչ թե ապագային և քաղաքական իրականության կերտմանը, այլ՝ արդեն իսկ ձևավորված քաղաքական իրականության պահպանմանը: Հայաստանում խորհրդանշական քաղաքականության իրականացման ընթացքում հաճախ օգտագործվում են մոռացված, բայց դեռևս գործող քաղաքական խորհրդանիշներ, որոնք խորհրդանշական տարածքում ստեղծում են երկիմաստություններ: Այդպիսի խորհրդանիշները հակառակ են իրենց նախնական իմաստին և վանում մարդկանց: Հայաստանի խորհրդանշական քաղաքականության այս վիճակը վկայում է, որ իշխանությունները առկա քաղաքական կարգը լեզվիմացնելու խնդիր ունեն: Այստեղից հետևում է, որ անհրաժեշտ է խորապես ուսումնասիրել Հայաստանում իրականացվող խորհրդանշական քաղաքականության առանձնահատկու-

թյուները, նրա տեղն ու դերը քաղաքական կյանքում, մասնավորապես՝ հետազոտել Հայաստանի քաղաքական խորհրդանշական տարածքը և նրանում շրջանառվող քաղաքական խորհրդանշները:

Հայաստանում իրականացվող խորհրդանշական քաղաքականության հիմնախնդիրները պայմանականորեն կարելի է ստորաբաժանել երկու մեծ խմբի՝ **տեսական** և **գործնական-կիրառական** (ընդունված հեղինակինն է): Տեսական կարևոր հիմնախնդիրներ են Հայաստանում իրականացվող խորհրդանշական քաղաքականության առանձնահատկությունների և քաղաքական իրականության կառուցադրումը, իշխանության լեզվիմացման կամ ապալեզվիմացման գործում նրա դերի ու նշանակության բացահայտումը: Տեսական կարևոր նշանակություն ունեն նաև Հայաստանում իրականացվող խորհրդանշական քաղաքականության մշակութային-քաղաքական հիմքերի, մասնավորապես՝ Հայաստանում զանգվածային գիտակցության առասպելաբանական շերտերի, շրջանառվող քաղաքական առասպելների, ինչպես նաև Հայաստանի քաղաքական արարողությունների, տոների ու հիշատակի օրերի և, այսպես կոչված՝ հիշողության քաղաքականության ուսումնասիրությունները:

Հայաստանում իրականացվող խորհրդանշական քաղաքականության գործնական-կիրառական կարևոր խնդիրներ են Հայաստանի տեղեկատվական-հաղորդակցական տարածքում իշխանության և զանգվածների փոխազդեցության հիմնական մողելների, խորհրդանշական քաղաքականության ակտորների նպատակների, ռազմավարությունների և տեխնոլոգիաների, խորհրդանշական քաղաքականության իրականացման առցանց տեխնոլոգիաների, ինչպես նաև իշխանության ներկայացման և ակնադիտականացման ժամանակակից տեխնոլոգիաների ուսումնասիրությունը:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Արդի դարաշրջանում Հայաստանի քաղաքական կյանքում խիստ կարևորվում է խորհրդանշական քաղաքականության դերը: Հոդվածում բացահայտվում են խորհրդանշական քաղաքականության էությունը, բովանդակությունը, գործառույթները, մշակութային-քաղաքական հիմքերը և Հայաստանում իրականացվող խորհրդանշական քաղաքականության հետ կապված խնդիրների շրջանակը:

**Բանալի բառեր՝** խորհրդանշական քաղաքականություն, հիշողության քաղաքականություն, խորհրդանիշ, տեղեկատվական-հաղորդակցական փոխազդեցություն, քաղաքական առասպել, քաղաքական արարողություն, տոների և հիշատակի օրեր:

## ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ СИМВОЛИЧЕСКОЙ ПОЛИТИКИ В АРМЕНИИ

**Степанян Вагн**

*Кандидат политических наук  
старший научный сотрудник Института  
философии, социологии и права НАН РА*

### РЕЗЮМЕ

В современной эпохе политической жизни Армении особенно актуальна роль символической политики. Настоящая статья освещает сущность, содержание, функции, культурно-политические основания такой политики и ряд проблем, связанных с ее воплощением в Армении.

**Ключевые слова:** символическая политика, политика памяти, символика, информационно-коммуникативное взаимодействие, политический миф, политическая церемония, праздники и памятные дни.

### THE MAIN PROBLEMS OF SYMBOLIC POLITICS IN ARMENIA

*Stepanyan Vahagn*

*PhD in Political Science  
Senior Researcher of the Institute of  
Philosophy, Sociology and Law of NAS RA*

In the modern era, the role of symbolic politics is very important in the political life of Armenia. The article reveals the essence, content, functions, cultural and political foundations of symbolic politics and the range of problems related to symbolic politics implemented in Armenia.

**Keywords:** symbolic politics, politics of memory, symbolism, information and communication interaction, political myth, political ceremony, holidays and memorable days.